Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

Կարմրուկի բռնկում. Առողջության Պատասխանատուի Հրաման

1. Ի՞նչ է կարմրուկը:

Կարմրուկը չափազանց վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է վարակված մարդկանց քթի և կոկորդի մեջ ապրող վիրուսից: Կարմրուկի ախտանիշները ներառում են՝

- Բարձր ջերմություն (101°F կամ ավելի բարձր)
- Հազ
- Քթահոսություն
- Կարմրած արցունքոտ աչքեր
- Կարմիր բծերով ցան: Որոշները մի փոքր բարձրացած են լինում: Սովորաբար սկսվում է դեմքի վրա կամ մազերի գծի մոտ և տարածվում դեպի մարմնի մյուս մասերը:

Կարմրուկը կարող է հանգեցնել լուրջ հիվանդությունների, հոսպիտալացման և նույնիսկ մահվան: Լուրջ հիվանդությունները ներառում են՝

- Փորլուծություն
- Ականջի վարակ
- Գլխուղեղի վնասվածք
- Խլություն
- Թոքաբորբ

Հղի կանայք, նորածինները, փոքր երեխաները և թուլացած իմունային համակարգ ունեցող անձինք գտնվում են լուրջ հիվանդությունների ամենամեծ վտանգի տակ: Կարմրուկի բուժում չկա:

2. Ինչպե՞ս է տարածվում կարմրուկը:

Կարմրուկը հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ վարակված անձը խոսում, շնչում, հազում կամ փռշտում է: 10 մարդկանցից ինը, ովքեր չեն ստացել կարմրուկի դեմ պատվաստանյութ, կվարակվեն կարմրուկով, եթե շփվեն վիրուսի հետ: Կարմրուկով կարող եք վարակվել, եթե Դուք կարմրուկով հիվանդ մարդու հետ շնչում եք նույն օդը, նույնիսկ նրա՝ տարածքից հեռանալուց մինչև երկու ժամ հետո: Կարմրուկը կարող է տարածվել նաև նախքան վարակված անձը ախտանիշներ կունենա:

3. Ո՞վ է Առողջության Պատասխանատուն

Առողջության Պատասխանատուն բժիշկ է՝ նշանակված Շրջանի Վերահսկիչների Խորհրդի կողմից, որը կիրառում է օրենքներ և ձեռնարկում միջոցներ՝ պաշտպանելու համայնքը և կանխելու հիվանդությունները կամ վնասվածքները:

Իրավապահ մարմինները, եթե կարիք լինի, կարող են աշխատել Առողջության Պատասխանատուի հետ՝ կատարելու արձակված հրամանները:

4. Ինչո՞ւ եմ ես ստանում Առողջության Պատասխանատուի Հրամանը:

Դուք ստանում եք Առողջության Պատասխանատուի Հրամանը, քանի որ շփում եք ունեցել կարմրուկով ախտորոշված անձի հետ կամ եղել նրան մոտ և Հանրային Առողջության Վարչությանը չեք ներկայացրել կարմրուկի նկատմամբ անվարակունակության (immunity) պահանջվող ապացույցները (օրինակ՝ փաստաթուղթ այն մասին, որ Դուք ստացել եք կարմրուկի դեմ պատվաստանյութի պահանջվող չափաբաժինները, կամ արյան թեստի արդյունք, որը ցույց է տալիս, որ Դուք անվարակունակ եք): Այսպիսով, Դուք կարմրուկով վարակվելու և այն ուրիշներին փոխանցելու վտանգի տակ եք:



Գլխավոր կետեր

- Կարմրուկը հեշտությամբ տարածվում է օդի միջոցով, երբ վարակված անձը հազում կամ փռշտում է:
- Կարմրուկը առողջության համար վտանգավոր է այն աշակերտների և աշխատակիցների համար, որոնք երբեք չեն հիվանդացել կարմրուկով կամ չեն ստացել կարմրուկի պատվաստանյութի առաջարկվող դեղաչափերը:
- Առողջության Պատասխանատուի Հրամանի նախազգուշացումներին հետևելը կարող է կանխել կարմրուկի տարածում:

Հավելյալ տեղեկությունների համար

Կարմրուկ՝
www.cdc.gov/measles/index.html

Անվճար կամ ցածր արժեքով պատվաստման կլինիկաներ՝
www.publichealth.lacounty.gov/chs կամ հավաքեք 2-1-1

Պատվաստման ժամանակացույց՝
www.cdc.gov/vaccines/schedules

Կարմրուկի բռնկում. Առողջության Պատասխանատուի Հրաման

5. Ի՞նչ է ինձնից պահանջում անել Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը:

Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը օրենքի ուժ ունեցող հրաման է, որը պահանջում է, որ Դուք խստորեն հետևեք մի շարք նախազգուշական միջոցների՝ ինքներդ Ձեզ պաշտպանելու և նվազեցնելու համար հավանականությունը, որ Դուք կարմրուկը ուրիշներին կփոխանցեք: Հրամանը ներառում է Հանրային Առողջության բուժակի հեռախոսահամարը, որին կարող եք զանգահարել այս հրամանի հետ կապված ցանկացած հարցով: Քանի դեռ չեք ազատվել հրամանից՝

- Մնացեք տանը/բնակավայրում և սահմանափակեք Ձեր տեղաշարժը: Դուք <u>չեք կարող գնալ</u> դպրոց կամ աշխատանքի Ձեր տնից/ բնակավայրից դուրս: Խուսափեք հասարակական վայրերից, որտեղ կարող եք շփվել շատ մարդկանց հետ՝ ներառյալ դասասենյակները, պարապմունքի սրահները, գրադարանները, պաշտամունքի վայրերը, կինոթատրոնները, մթերային խանութները, առևտրի կենտրոնները, մարզասրահները, բացօթյա միջոցառումները և սպորտային միջոցառումները:
- Եթե Դուք ունեք որևէ հանդիպում, որը Ձեզնից պահանջում է լքել Ձեր տունը/բնակավայրը, օրինակ՝ բժշկի, ատամնաբույժի և դպրոցի հետ կապված հանդիպումներ, տեղեկացրեք Հանրային Առողջության բուժակին: Եթե անհրաժեշտ է, որ Դուք այցելեք բժշկի, նախքան գրասենյակ գնալը զանգահարեք բժշկին և տեղեկացրեք նրան, որ Դուք շփվել եք կարմրուկի վիրուսի հետ, որպեսզի նրանք կարողանան վարակի վերահսկման նախազգուշական քայլեր անել՝ նվազեցնելու կարմրուկի տարածման հավանականությունը:
- Մի օգտվեք հասարակական կամ առևտրային փոխադրամիջոցներից, օրինակ՝ ավտոբուսներից, մետրոյից, գնացքներից, տաքսիներից, կիսովի փոխադրամիջոցներից (ride-share) կամ ինքնաթիռներից:
- Մի ընդունեք այցելուներ Ձեր տանը/բնակավայրում, քանի դեռ նրանք չեն ստուգվել և հաստատվել Հանրային Առողջության անձնակազմի կողմից և կարմրուկի նկատմամբ անվարակունակ չեն:
- Եթե մտադիր եք տեղափոխվել այլ սենյակ/բնակավայր, խնդրում ենք տեղեկացնել Հանրային Առողջության բուժակին:
- Քայլեր արեք՝ կանխելու այն մանրէների տարածումը, որոնք առաջացնում են կարմրուկ, օրինակ՝ փռշտալիս կամ հազալիս բերանը և քիթը միշտ անձեռոցիկով ծածկեք:
- Եթե ունեք կարմրուկի ախտանիշներ, ինչպիսիք են ջերմությունը, հազը, քթահոսությունը, կարմրած աչքերը և/կամ ցանը, զանգահարեք Հանրային Առողջության բուժակին՝ Առողջության Պատասխանատուի Հրամանում նշված հեռախոսահամարով:
- Համագործակցեք մեր Հանրային Առողջության աշխատակիցների հետ, ովքեր կտան տեղեկություններ, կպատասխանեն Ձեր հարցերին, կօգնեն Ձեզ հետևել այս նախազգուշական միջոցներին և կվերահսկեն, թե ինչպես եք պահպանում այն:

6. Որքա՞ն ժամանակ է ինձնից պահանջվում հետևել Առողջության Պատասխանատուի Հրամանի նախազգուշական միջոցներին:

Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը ուժի մեջ կմնա մինչև՝ 1) Դուք տրամադրեք փաստաթղթեր այն մասին, որ Դուք ստացել եք կարմրուկի դեմ պատվաստանյութի (ԿԿԽ՝ MMR) դեղաչափերի պահանջվող քանակը, կամ 2) Դուք ներկայացնեք արյան թեստի պատասխաններ, որոնք ցույց են տալիս, որ Դուք անվարակունակ եք կարմրուկի նկատմամբ, կամ 3) Դուք հասել եք գաղտնի շրջանի ավարտին: Այս դեպքերում Դուք կստանաք ծանուցում, որը Ձեզ կազատի Հրամանից:

7. Ի՞նչ պետք է անեմ, եթե ինձ լավ չեմ զգում կամ եթե առաջանան ախտանիշներ, որոնք կարող են կապված լինել կարմրուկի հետ:

Եթե Դուք լավ չեք զգում կամ ունեք որևէ ախտանիշ, որը կարող է կապված լինել կարմրուկի հետ, օրինակ՝ ջերմություն, հազ, քթահոսություն, կարմրած աչքերը և/կամ ցան, անմիջապես զանգահարեք Հանրային Առողջության բուժակին: Բուժակը կօգնի Ձեզ որոշել, թե արդյոք Դուք պետք է դիմեք բուժօգնության: Եթե Դուք անպայման պետք է այցելեք բժշկի, նախքան գրասենյակ գնալը զանգահարեք բժշկին և հայտնեք գրասենյակին, որ Դուք շփվել եք կարմրուկի վիրուսի հետ, որպեսզի նրանք կարողանան քայլեր ձեռնարկել՝ նվազեցնելու կարմրուկի տարածման հավանականությունը: